

Ա. Շ. ՍԱՀԱԿՅԱՆ, «Սասնա ծռերի» պատումների ֆենական համեմատություն. ՀՄՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1975, 190 էջ:

Թեպետև մեր ազգային վեպի՝ «Սասնա ծռեր» հերոսական էպոսի, առանցքը IX—X դդ. արաբ զավթիչների դեմ Սասնա ժողովրդի մզած ազատագրական կռիվներն են եղել, բայց այնտեղ գտնում ենք նաև նախորդ դարերի անցքերի վերհանդիման և իրականության ու բնության երևույթների առասպելական մեկնաբանումներ՝ հին վեպերին բնորոշ այլևայլ տարրերով հանդերձ: Ամենաուշը XIII դ. մեր վեպն արդեն ձևավորվել էր, չնայած որ նրա գոյությունն հավաստող «վավերագրերը», որ այլ բան չեն, քան առանձին միջադեպերի վերհանդիման, վիպական որոշ տեղանունների ստուգաբանություններ ու այդ կապակցությամբ հնօրյա զրույցների գոյության հավաստումներ, ուշ միջնադարից աչն կողմ չեն անցնում (պորտուգալացի ուղևորներ Ա. Տենեյրոյի—1524/25 թթ., և Մ. Ալֆոնսոյի—1565/6, երկերը և Միխիթարյան հայրեր Ղ. Ինճիճյանի և Ն. Սարգիսյանի աշխարհագրական-տեղագրական երկասիրությունները՝ լույս տեսած 1806 և 1864 թթ.): Գրենք XVI դ. հայ ժողովրդական վեպը պատմվել է Արևմտյան Հայաստանում և այնքան լայն տարածում ունեցել, որ գրավել է օտարների ուշադրությունն անգամ:

Ասացողներից շատերը (առաջին հերթին Մոկացի Նախո Քեռին) վկայել են, որ վեպը Սասնա քառասուն սերնդի (զարմերի) պատմությունն է ներառել իր մեջ: Եթե մի սերնդի կյանքը հաշվենք 20—25 տարի, ապա քառասուն սերնդի կյանքի պատմությունը պիտի ընդգրկեր Հայաստան աշխարհի հարավ-արևելյան բնաշխարհների 800—1000 տարվա վիպական պատմությունը, մի բան, որ անհավատալի է, քանի որ առկա պատմությունն հաշվի առնելու դեպքում չորս սերնդի կյանքից ավելի այնտեղ ոչինչ չենք գտնում, էլ չենք ասում, որ «Սասնա ծռերը» «Տարոնո պատերազմ» հին վեպին էր հաջորդում, իսկ վերջինս VII դ. արդեն ձևավորված էր:

Արդ, ի՞նչ ծավալ ու ընդգրկում է ունեցել մեր վեպը ձևավորման շրջանից սկսած, ի՞նչ դրվագներ ու միջադեպեր են յուրահատուկ եղել նրան սկզբից անտի և ի՞նչ նորերով է ճոխացվել, ի՞նչ հետախնդրություններ ու գաղափարներ են շարժիչ ուժ ծառայել ճյուղերից յուրաքանչյուրի համար, հերոսներից յուրաքանչյուրը ի՞նչ ուղի է անցել ծննդից մինչև մահ. սրանք և բազմաթիվ ուրիշ հարցեր երկար տարիներ ծառացած են եղել հետազոտողների առջև և, անկեղծ ասած, բավարար լուծում չեն ստացել բնավ:

Անցած տասը դարերը հայ ժողովրդական վեպի բյուրեղացման ու հղկման ժամանակները լինելով հանդերձ, նաև նրա քայքայման սաղմերն են պարունակել իրենց մեջ: Եթե, այնուամենայնիվ, այն փրկվել է, նրա վերջնական փրկումն ու այլափոխման առաջն առնվել, ապա դրա համար պարտական ենք ամենից առաջ Գարեգին Սրվանձտյանի, ապա Մ. Արեղյանի հերոսական ջանքերին:

Սրվանձտյանից և Արեղյանից սկսած մինչև Կարապետ Մելիք-Օհանջանյան՝ գրավոր ամեն մի պատում հնարավորություններ էր ստեղծում գեթ մոտավոր ձևով վերականգնելու կործանված շինվածքը՝ մեջտեղ հանելով հայ ժողովրդական վեպի նոր դրվագներ ու միջադեպեր, ամբողջացնելով ու հարստացնելով արդեն հայտնիները, ավելի կատարյալ ու բանաստեղծական հատվածներ մեջտեղ բերելով:

1939 թ. կազմվեց մեր վեպի համահավաք բնագիրը, որով կարծես թե ավարտվեց նրա բնագրի վերականգնումը: Այսուհետև ավելի ուշադրություն էր դարձվում նրա գաղափարական-գեղարվեստական վերլուծման վրա, ընդգծվում, իմաստավորվում կամ բացահայտվում նրա հումանիստական գաղափարները, ինչպես նաև ումանց կողմից մատնանշվում ետադիմական աշխարհայեցողության գործած ավերածությունները:

նվ թվում՝ ևր, թև ժողովրդական վեպը միակ բնագավառն է, ուր այլևս նոր բան ասելու տեղ չի մնում՝ ո՛չ պատմական, ո՛չ գաղափարական-գիտական, ո՛չ պոետիկական-գեղագիտական առումով, բայց այդպես չէր իրականում:

Արեգյանն իր հիմնաքարային հետազոտությունների մեջ հայ ժողովրդական վեպին վերաբերող առանցքային հարցերը պարզելով հանդերձ՝ մեկուսի էր թողել առանձին ածանցյալ խնդիրներ, բայց և մատնանշել այն ուղիները, որոնցով պիտի ընթանար ռևանսա Մոերիչ հետադա ուսումնասիրությունը:

Գրախոսվող սույն աշխատությունը դրա պերճախոս վեպն է և արեղյանական դրույթների կենսունակության վառ արտահայտությունը:

Չեղինակը՝ Ա. Սահակյանը, հետադոտության ամբողջ ընթացքում երբեք չի կտրվում իրական գետնից՝ հայ ժողովրդական վեպի առկա տարբերակներից, և ինչ դրույթ էլ որ առաջադրում կամ հիմնավորում է, ամեն անգամ դիմում է բուն պատումներին, բաղդատում դրանք միմյանց հետ, սթափ հայացքով նեմարում արդյունքը: Նա հրաշալիորեն զգում ու հասկանում է հայ ժողովրդական վեպի բառն ու ոգին և մեկնաբանում դրանք ճշտորեն:

Ա. Սահակյանի սույն աշխատությունը հրապարակ է հանում հայ ժողովրդական վեպի կառուցվածքային ողջ բարդությունը և բովանդակության հարստությունը, ուսումնասիրողներին մատչելի, երբեմն էլ միայն իրեն հայտնի առանձին պատումներում առկա կարևոր ու երկրորդական բոլոր դրվագներն ու միջադեպերը: Խսկ վերջիններս իրենց հերթին հնարավորություն են տալիս, ինչպես ավի մեջ, տեսնել, թե տվյալ դրվագներից որո՞նք են հարազատ ու բնորոշ էպիկական մտածողությանն առհասարակ, ի՞նչն է գալիս հին օրերից և կամ արդյունք է նոր ժամանակների ազդեցության, որ հայ ժողովրդական վեպի հետագա զարգացման ընթացքին հետևելու առումով հետաքրքրական է թերևս, բայց ոչ նրա համահավաք բնագրի վերաստեղծման համար:

Սահակյանը պարզում է միևնույն բնաշխարհում կամ նրանից դուրս եկած ասացողներից գրի առնված պատումների յուրահատկությունները, բաղդատում դրանք մեկ այլ բնաշխարհի վիպասացների պատմածների հետ (Մոկաց պատումները Մշո, Վասպուրականի և այլոց հետ), որը մի դեպքում մեջտեղ է հանում քնարականությամբ առնչված էջեր և շափածոյին մոտեցող հատվածների առատություն, մեկ այլ դեպքում՝ առարկայական-ռեալիստական տեսարաններ, երրորդում՝ պատմական որոշակիության աղարտումներ և հակում դեպի հեքիաթասացությունը:

Ա. Սահակյանի ուշադրության առարկան են նաև վիպասացների դպրոցները կամ գերդաստանները, ինչպես, օրինակ, խասուտրի դպրոցը: Նա ցույց է տալիս դեպքեր, երբ պապից մինչև թոռ՝ վիպասացների երեք սերունդ, պատմել են մեր ժողովրդական վեպը, ու թեև, իբրև անհատականություններ, նրանցից յուրաքանչյուրն ունեցել է միայն իրեն հատուկ երանգներ, բայց էպիկական դիպվածներն ու դեմքերը, միջադեպերն ու բախման առանցքը անփոփոխ են մնացել: Խիստ պահպանողական են եղել վիպասացների դինաստիաները, համարյա մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում նրանք ճշտությամբ ու սրբությամբ պահպանել են ավագներից կրտսերներին փոխանցվող աքն ու երգը:

Միանգամայն պատճառաբանված, բայց և համարձակ են Սահակյանի եզրակացությունները հայ ժողովրդական վեպի լուծյան և տարածման շրջանակների վերաբերյալ: Անառարկելի կոմանների զորությամբ և առանց վարանելու նա հավաստում է, որ հայ ժողովրդական վեպը համազգային է իր էությունում միայն, իսկ տարածմամբ միշտ էլ մնացել է տեղային ստեղծագործություն՝ պատմվելով կա՛մ արևմտահայ համապատասխան բնաշխարհներում, կա՛մ նրանից դուրս եկած վիպասացների կողմից, բայց երբե՛ք՝ արևելահայ ասացողից: Եվ սա ճիշտ է միանգամայն, երբ նորից-նոր լինում ենք առկա պատումները:

Նրբամեն թվում է, թե Սահակյանը հայտնի ճշմարտություններ է վերաշարադրում, բայց անգամ այդ դեպքերում նկատում ենք սրբագրումներ, որոնց հիման վրա միայն կարելի է հավատ ընծայել հսկայի ենթադրություններին: Այդ վերաբերում է ամենից առաջ պատումների սկզբում, որպես կանոն, կրկնվող «Ողորմիսներին» ու վերջիններիս մեկնությունը: «Ողորմիսներին» օգնությամբ Սահակյանը մի կողմից նոր լուսաբանում է տալիս ժողովրդական պատմության մասին եղած հնօրյա առասպելին, մյուս կողմից վերջնականապես հաստատում, որ հայ ժողովրդական վեպը իր ձևավորման օրերից չորս ճյուղ է ունեցել միայն, և գրառված պատումները անհայտ ճյուղերի զոյություն ենթադրելու հիմք չեն տալիս բնավ: Նա հաստատում է նաև, որ մեջ վեպի մեջ գործող հերոսները մնացել են նույնը, մի կողմ թողած, որ երբեմն շփոթվել են նրանց անունները, երբեմն էլ մեկի դերը վերագրվել է մեկ ուրիշի կամ

մեկ կերպարը տրոհվել ու դարձել է երկուս, ստանալով իր նոր անունն ու ազգակցական կապը գլխավոր հերոսների հետ, կամ էլ դեպքերն ու դեմքերը կենտրոնացվել են մեկ անձի շուրջ:

Ա. Սահակյանը կարողացել է բացահայտել մեր ժողովրդական վեպի ճյուղերի ներքին-դինամիկան, նրանց գլխավոր թեմաները, դյուցազուններ Սանասարի, Մեծ Մհերի, Դավթի հոգացումները հղոր ու անկախ պետականության և օրինավոր ու արժանավոր ժառանգի համար, հայրենի հարկի, աղատ երկրի և սերունդների հարատևման համար, պարզել է այդ հոգացումների բարոյագիտական ու իմաստաբանական շարժառիթները: Այս առումով՝ նա կարողավորում է առանձին պատումներում առկա շփոթները, համարելով դրանք հետևանք կա՛մ ասացողների՝ նյութը վատ իմանալուն, կա՛մ էլ նրանց մտավոր խեղճության:

Գրախոսվող գրքի հեղինակը բացահայտում է նաև հայ ժողովրդական վեպի կառուցվածքային հիմնական ուրվագիծը, որ գրեթե նույնն է բոլոր ճյուղերում և որի հետևություններ են հյուսված վերջինները: Ժյուղերի անկախ գոյության իրավունք հավաստելու նրա ելակետը վիպական-ավանդական այն ստվերագիծն է, ըստ որի՝ հերոսներից յուրաքանչյուրը պետք է ունենա իր ծննդյան, մանկության, պատանեկության, ամուսնության պատմությունը կամ էլ կապված լինի բնության, աստվածների և հղոր իշխանական տների հետ: Այս հայեցակետից են վերլուծվում Մեծ Մհերի, Դավթի և մյուս ճյուղերն իրենց հիմնական թեմաներով (կոնվ ստար բոնակալի դեմ, հայրենի պետականության հիմնում կամ վերականգնում, հղոր ժառանգի հոգս ու ծնունդ և այլն): Այստեղ ևս նա նկատում է սյուժեների շփոթության ու անախրոնիզմների դեպքեր, վերականգնում կամ վերաստեղծում: Այս տեսակետից չափազանց ուսանելի է 36-րդ պատումի ջննությունը, ուր մասնավորապես Սանասար-Բաղդասարի և Մեծ Մհերի ճյուղերի մեջ առկա են փոխանցումներ ու շփոթ:

Գիտական-գործնական մեծ արժեք ունեն Սահակյանի կազմած սխեմա-աղյուսակները, որոնցից կուզեինք ուշադրություն հրավիրել առանձնապես Դավթի ճյուղին վերաբերողի վրա, ուր հաշվի են առնված ու մեջտեղ բերված պատումներում առկա բոլոր միջադեպերը: Սա ո՛չ միայն գիտական եզրակացություններ անելու լայն հնարավորություններ է ընձեռում, այլև հիմք ծառայում մեր ժողովրդական վեպի համահավաք բնագրի վերանայման ու լրացման, մի բան, որ վաղ թե ուշ պիտի կատարվի և որը նախապատրաստում է այս գործի հեղինակը:

Ձեռք չափազանցի, եթե ասենք, որ Սահակյանի աշխատության ուղածող մասում կարելի է գտնել որևէ թարմ ու ինքնատիպ միտք, խելացի հարցադրում կամ սրամիտ լուծում: Դավթի և Մելիքի կոնվը, նկատում է Սահակյանը, ավելի ընդհանրացված գաղափար է, քան պատմական որոշակի իրադարձության անդրապատկերում: Կամ խոսելով այն պատճառների մասին, թե ինչու Վասնա Մոերիցը հետո մեր ժողովուրդը չստեղծեց նոր վեպ, Սահակյանը նկատում է, որ հայ ժողովրդի ազատագրական կոնվները Բաղրատունյաց թագավորության անկումից հետո հաղթական վախճան չունեցան, մայր հայրենիքում անկախ պետականություն այլևս չստեղծվեց, հետևաբար և Վալկից ու Բելիցը մինչև Վասնուցի Դավթի ձգվող վիպական շարքերը նոր կերպարանափոխում չունեցան. հայոց պատմական բախտի բեկումը այլևս հնարավորություններ չէր ընձեռում, որ ժողովրդական վեպը առհասարակ սնող աղբյուր ունենար և զորանար:

Ըստ էության, սկզբունքային դիտողություններ Սահակյանի աշխատությունը չի վերցնում, որովհետև այն գրված է նյութը համակողմանիորեն հետազոտելուց և ստացված եզրակացությունները հանգամանորեն կշռադատելուց հետո, ինքնատիպ ոճով ու գեղեցիկ հայերենով. նկատվածը միայն առանձին մանր վրիպումներ են, որոնց վրա հազիվ թե հարկ լինի կանգ առնել:

Մեզ անհաջող է թվում միայն աշխատության խորագիրը՝ հատկապես նրա երկրորդ մասը՝ «...Քննական համեմատություն»: Տեղին ու հարմար կլիներ կոչել այն՝ Վասնա Մոերի պատմության համեմատական ուսումնասիրություն, որը ավելի տարողունակ է ու պատշաճ գրքի էության ու ընդգրկմանը:

Եզրափակենք. Շնորհալի բանագետ Ա. Սահակյանի ներկա աշխատությունն իր թարմ հարցադրումներով ու խոր լուծումներով, բնագրագիտական քննություններով և Վասնա Մոերի կառուցվածքային սկզբունքների բացահայտման ճանապարհով հասած շոշափելի արդյունքներով լուրջ ներդրում է հայ ժողովրդական վեպի ուսումնասիրության մարզում:

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բաճախիբական գիտությունների դոկտոր